

Ի՞ՐՆՉՆ Է ՁԵՁ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ

Որոշելը՝ արդյո՞ք հոսպիսը ճիշտ
ընտրությունն է Ձեզ համար

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԱՅՍ ՈՐԴԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿՆ Է
ԽՐԱԽՈՒՄԵԼ ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻՆ
ՀԵՏԱԶՈՏԵԼ ՀՈՍՊԻՍԻ ՀԱՆԴԵՊ ԻՐԵՆՑ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ: ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱՆ ՀԻՄՆԱԿԸ Է ՄՈՏԻՎԱՑԻՈՆ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՈՐԴԵՑՈՒՅՑԻ ՎՐԱ,
ՈՐԻ ՀԵՂԻՆԱԿՆ Է DR. KEN RESNICOW-Ն

ՍԿՍԵԼ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

“

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ՇԱՏ ՀԱՐՑԵՐ ԿԱՆ

ԿԱՐՈՂ ԵՆՔ ԽՈՍԵԼ ՈՐՔԱՆ ԿՑԱՆԿԱՆԱՔ

ԿԱՐՈՂ ԵՆՔ ՁՐՈՒՅՑԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԵՐԲ ԿԱՄԵՆԱՔ:*

ԻՆՉ Է ՀՈՍՊԻՍԸ

Հոսպիսի նպատակն է բարելավել Ձեր կյանքի որակը վերջին ամիսների, շաբաթների կամ օրերի ընթացքում: Հոսպիսը կարող է խաղաղեցնել Ձեր միտքը, որպեսզի կենտրոնանաք իրապես կարևորի վրա: Քանի դեռ հոսպիսում եք, Դուք շարունակում եք բարձրակարգ բժշկական օգնություն ստանալ: Դուք կստանաք հուզական, հոգեբանական և հոգևոր աջակցություն: Ձեր ընտանիքը կկարողանա մասնակցել խնամքի և հոգևոր աջակցության ընթացքին

Հոսպիսում քիմիոթերապիայի և ճառագայթային բուժման փոխարեն կյանքի վերջին շրջանում գտնվողների համար շեշտը դրված է խնամքի, մխիթարության և աջակցության վրա: Հոսպիսը կարող է շատ հարցերում օգնել այս շրջանում, օրինակ՝ ցավը մեղմել, նվազեցնել անհանգստությունը: Ուշադրության կենտրոնում հարմարավետ և արժանապատիվ կյանքով ավելի երկար ապրելն է:

ՈՐՏԵՂ Է ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ՀՈՍՊԻՍԸ

Հոսպիսային խնամքը սովորաբար տրամադրվում է Ձեր տանը, կամ ընտանիքի անդամի կամ ընկերոջ տանը:

ԻՆՉՊԵՍ ԵՄ ՎՃԱՐՈՒՄ ՀՈՍՊԻՍԻ ՀԱՄԱՐ

Ծառայությունների մեծ մասը ծածկում են Medicare, Medicaid ապահովագրականները և մասնավոր ապահովագրական ընկերություններ, բայց հնարավոր է լինեն նաև ծառայություններ, որոնց համար ինքներդ պետք է վճարեք: Ձեզ որևէ հոսպիսից չեն կարող մերժել վճարել չկարողանալու պատճառով: Հոսպիսում լինելը կամ ընտրական է: Հոսպիսից կարող եք օգտվել այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխանում եք պահանջներին: Ինչպես նաև կարող եք հրաժարվել խնամքից ցանկացած պահի ցանկացած պատճառով:

*Նշում. Տվեք այնքան տեղեկություն, որքան անհրաժեշտ է բուժառուին:

ԲԱՑԱՅԱՑՏԵՔ ԵՎ ՀԱՍԿԱՑՏԵՔ



ՊԱՐԶԱՊԵՍ ԻՄԱՑՏԵՔ, ՈՐ ԶԿԱՆ ԾԻՇՏ ԿԱՄ ՍԽԱԼ
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄԻ ՓՈԹՐ ՊԱՏՄԵՔ ԶԵՐ ԵՎ ՔԱՂՑԿԵՂԻ ՀԵՏ ԱՆՑԱԾ ԶԵՐ
ՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ

ԻՆՉՊԵՐՍ ԻՄԱԼԱՄ, ԹԵ ԱՐԴՅՈՔ ՀՈՍՊԻՍԱԸ ԾԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ Ե ԻՆՁ ՀԱՄԱՐ:

Հեշտ չէ որոշել, թե արդյոք հոսպիսը ճիշտ ընտրություն է Ձեր կամ Ձեր
ընտանիքի համար: Նորմալ է, որ այս ընթացքում ընտանիքները ծանր
Էմոցիոնալ ապրումներ են ունենում: Հնարավոր է մտածեք, թե պատրաստ
չե՞ք ընտանիքի անդամների հետ քննարկել հոսպիսի անհրաժեշտության
հարցը: Հնարավոր է հակասական, անվստահ կամ հիասթափված զգաք:
Հնարավոր է պայքարում եք անհանգստության, ծանրաբեռնվածության
կամ վախի դեմ:

ԽՈՐՀՐԴԱԾԵԼԸ. ԹՎՈՒՄ Է, ԹԵ ՁԳՈՒՄ ԵՔ.....

Մենակ	Վիատված
Վախեցած	Հիասթափված
Անհույս	Ճնշված
Անուժ	Պայքարող
Անվստահ	Չկամենալ վշտացնել ընտանիքին

**Ուժասպառ
Ծանրաբեռնված
Մոլորված
Հոգնած**

ՀԵՏԱԶՈՏԵԼԸ. Ինչո՞ւ այդպես ասացիք

ՀԵՏԱԶՈՏԵԼԸ. Ինչպիսի՞ զգացում ունեիք:

ԶՐՈՒՅՑԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՐԵՔ ԿԱՐԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՇՈՒՐԶ



ՄԻ ՓՈԹՐ ՊԱՏՄԵՔ ԻՆՁ, ԹԵ ԻՆՉՆ Ե ԿԱՐԵՎՈՐ ԶԵՐ ԵՎ
ԶԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

ՀԵՏԱԶՈՏԵԼԸ. Որո՞նք են այն մի քանի կարևոր բաները, որոնք ցանկանում
եք ունենալ կյանքի վերջում:

Որքանո՞վ եք վստահ, որ կկարողանաք հասնել դրանց:

ՀԵՏԱԶՈՏԵԼԸ. Հոսպիսի վերաբերյալ կոնկրետ հարցեր ունե՞ք:

ԽՈՐՀՐԴԱԾԵԼԸ. Թվում է՝ մի փոքր կաշկանդվում եք հոսպիսի մասին
խոսելիս: Թվում է՝ պայքարում եք հոսպիսի մասին մտքերի դեմ:

Հաճախ, կյանքի վերջի մասին մտածելիս, մարդիկ հետևյալ մտքերն
են հայտնում.

- «Ուզում եմ հրաժեշտ տալ բոլոր նրանց, ում սիրում եմ, վերջին անգամ
նայել օվկիանոսին, լսել երաժշտություն և գնալ»:
- «Ուզում եմ լինել խաղաղ, առանց ցավի, ոչինչ չթողնել չասված»:
- «Ուզում եմ շրջապատված լինել իմ ընտանիքով, իմ տանը»:

ՀԵՏԱԶՈՏԵԼԸ. Նշվածներից որո՞նք են Ձեզ համար առավել կարևոր:

ՀՈՍՊԻՍԻ ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ.

Լինել լավ ծնող	Լինել լավ կողակից
Լինել ուժեղ	Լինել հոգատար
Ֆինանսական պատճառներ	Հոգևոր/կրոնական
Երբ պահը գա, վերահսկել իրավիճակը	Երբ պահը գա, լինել խաղաղ
Լինել կազմակերպված	Չդառնալ բեռ
Ցանկանալ միշտ լինել դրական	Ցանկանալ մտքի խաղաղություն
տրամադրվածությամբ	

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՉՐՈՒՅՑԸ ՍԿՍԵԼԸ

“

ԵՐԲԵՎԷ ԽՈՍՏԵՂ ԵՔ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋՈՒՄ ՁԵՐ ԽՆԱՄՔԻ ՄԱՍԻՆ

ԵՐԲԵՎԷ ԽՈՍՏԵՂ ԵՔ ԲԺՇԿԻ ՀԵՏ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋՈՒՄ ՁԵՐ ԽՆԱՄՔԻ ՄԱՍԻՆ

ԱՐԴՅՈ՞Ք ՀՈՍՊԻՍԱԸ ՃԻՇՏ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ

ՀԵՏԱՉՈՏԵԼԸ. Ինչպիսի՞ արդյունք ունեցավ:

ՀԵՏԱՉՈՏԵԼԸ. Ինչու՞ արդյապիսի զգացում ունեցաք:

ԽՈՐՀՐԴԱԾԵԼԸ. Դուք սկսում եք մտածել, որ այլևս անհանգստանալու կարիք չկա: Անորոշությունը սկսել է քիչ ավելի անհանգստացնել Ձեզ:

Միգուցե ապագայի հանդեպ անվստահությունը սկսել է Ձեզ մտահոգել: Միգուցե զգաք, որ այլևս չեք ցանկանում շարունակ անհանգստանալ: Միգուցե Ձեզ հետաքրքրի՝ ինչպես են ապագայի ծրագրեր գծում:

ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ

“

ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԱՅՍՕՐ ՀՈՍՊԻՍԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ, ԿԱՐԵՎՈՐ Է ԽՈՍԵԼ ԱՅՍ ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ:

ՁԵՐ ՈՒՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ԹԻՄԸ ԼԻԱՐԺԵՔ ՏԵՂԵԿԱՑԿԱԾ Է, ԹԵ ՀՈՍՊԻՍՆ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ ՁԵՉ ԵՎ ՁԵՐ ԸՆՏԱՆՔԻՆ:

«ԻՆՉ ԿԼԻՆԻ ՀԵՏՈ»

ՀԵՏԱՉՈՏԵԼԸ. Խոսակցության ընթացքում առաջացե՞լ են հարցեր, որոնք չենք քննարկել, բայց որոնց մասին վերջերս մտածել եք:

ԽՈՐՀՐԴԱԾԵԼԸ. Հնարավոր է ցանկանաք հաշվի առնել....

ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ.

Ինձ ավելի շատ ժամանակ է պետք մտածելու, թե ինչ եմ ուզում կյանքի վերջում

Ես պատրաստվում եմ խոսել կողակցիս/ամուսնուս/կնոջս հետ

Ես պատրաստվում եմ խոսել ընտանիքիս անդամների և ընկերներիս հետ

Ես պատրաստվում եմ խոսել ուռուցքաբանիս հետ

ԽՈՐՀՐԴԱԾԵԼԸ. Կարծես թե ցանկանում եք Ձեր խնամքի նպատակները քննարկել ընտանիքի անդամների հետ:



Nonprofit corporations and independent licensees
of the Blue Cross and Blue Shield Association